

ՔՐԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՋԻՆ ԶՆԴԻ

Քուրդ ժողովուրդն իր էթնո-կուլտուրայով վաղուց է գրավել դիտական աշխարհի, մասնավորապես արևելագետների, ուշագրությունը: Մեր ժամանակներում հատկանշական է այն, որ թե՛ Սովետական Միության մեջ, թե՛ արտասահմանում քուրդ ժողովրդի պատմության և կուլտուրայի հարցերով զբաղվում են ոչ միայն այլազգի գիտնականները, այլև մեծ թվով ազգային կադրեր:

Ներկա հոգվածում մենք կփորձենք լուսարանել այն հարցը, թե Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո անցած 40 տարիների ընթացքում ի՞նչ աշխատանքներ են կատարված քրդագիտության բնագավառում և ի՞նչ հեռանկարներ կան սովետական քրդագիտության հետագա զարգացման համար:

Քրդագիտության զարգացումը Սովետական Հայաստանում և ընդհանրապես Սովետական Միության մեջ, սերտորեն կապված է քրդական նոր այբուբենի հաստատման հետ, որը կուլտուրական ամենակարևոր երևույթներից էր քուրդ ժողովրդի կյանքում:

Ակադեմիկոս Ն. Յա. Մառի բառերով ասած՝ «պատմության կողմից լուսյան մատնված» այդ ժողովրդի կուլտուրական կյանքում ամենից առաջ մեծ հետաքրքրություն առաջ բերեց քրդերեն լեզվի ուսումնասիրության խնդիրը: Այս ուղղությամբ գրվեցին առանձին հետազոտություններ, քերականական ձևերի և հրատարակվեցին և հրատարակվում են քրդերեն լեզվին վերաբերող հոգվածներ, պաշտպանվեցին թեկնածուական դիսերտացիաներ, իսկ ներկայումս պատրաստվում են քրդերեն լեզվի տարբեր պրոբլեմներին նվիրված գոկտորական դիսերտացիաներ: Հրատարակվել են մի շարք բառարաններ, այդ թվում՝ հայ-քրդերեն, ռուս-քրդերեն, քուրդ-ռուսերեն, ինչպես նաև տերմինաբանական և ուղղագրական բառարաններ: Տպագրության է պատրաստվում քուրդ-հայ-ռուսերեն բառարանը, որն ընդգրկում է մոտ 30 հազար բառ:

Այս պատվաբեր գործի իրականացմանը անցած չորս տասնամյակների ընթացքում մասնակցել են Սովետական Հայաստանի և Սովետական Միության անվանի քրդագետները, այդ թվում ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գր. Ղափանցյանը, ինչպես և միջին ու երիտասարդ սերնդի շատ ներկայացուցիչներ՝ ՍՍՌՄ Արևելագիտության ինստիտուտի Քրդագիտական կաբինետի ավագ գիտ. աշխատակիցներ Ղ. Քուրդուրը, Ի. Յուկերմանը, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Չ. Բաքուրը, Հայկական ՍՍՌ Պետական համալսարանի դասախոս Վ. Նադիրին, պատմական գիտությունների թեկնածու Ի. Ֆարիզովը, քրդագետներ Ա. Շամիրովը, Ս. Մովսիսյանը և ուրիշներ:

Հիշատակված քրդագետների աշխատությունները հիմնականում տարվել են, մի կողմից, քրդերեն լեզվի ուսումնասիրման, մյուս կողմից՝ քրդերեն գրական լեզու ստեղծելու ուղղությամբ:

Ուսումնասիրության ենթակա կարևոր հարցերից մեկն է եղել քրդերենի ինքնուրույն, առանձին լեզու լինելու խնդիրը: Հայտնի է, որ քրդերենը նույնպես մտնում է իրանական լեզվախմբի մեջ, սակայն նույնացնել այն պարսկերենի հետ միանգամայն սխալ է և գիտականորեն անընդունելի:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրդերը, պահպանելով իրենց մարդաբանական տիպը, պահպանել են նաև իրենց ինքնուրույն հինավուրց լեզուն, որն ունի իր քերականական հաստատուն կառուցվածքը, բառապաշարի հարուստ ֆոնդը, ուրույն հնչյունաբանությունը, քրդերեն լեզվին հատուկ ձևաբանությունը և շարահյուսությունը: Այդ առումով քրդ-

ղերենի բերանալուծութիւնը ոչ մի կերպ հնարավոր չէ փոխարինել պարսկերենի և կամ իրանական լեզվախմբին պատկանող որևէ այլ լեզվի քերականութեամբ:

Սովետական Հայաստանում քրդական գիր ու գրականութեան զարգացմանը զուգահեռ, մեծ աշխատանք կատարվեց քրդերեն լեզվի հարստացման ասպարեզում: Հասկանալի է, որ տպագիր գրականութեան բացակայութեան հետևանքով քրդերեն գրական միասնական լեզուն ժամանակին չգարգացավ այնպես, ինչպես այդ եղել է գրականութիւն ունեցող այլ ժողովուրդներին մոտ: Անհրաժեշտ էր ստեղծել քրդերեն գրական հարուստ լեզու, որով հնարավոր լինէր գրել բարձրարժեք գեղարվեստական գործեր և հաղորդել ժամանակակից գիտելիքները: Դրան հասնելու համար ամենից առաջ պետք էր հաշվի առնել քրդերեն լեզվի զարգացման ներքին օրինաչափութիւնները, գրա հիման վրա հարստացնել բառային ֆոնդը՝ ստեղծելով, օրինակ, բառաբարդութիւններ՝ դոյականների, բայերի, նախդիրների, ածանցների կապակցութիւնների միջոցով (ինչպէս՝ *дождь* — հարվածային, *пешан* — առաջավոր, *голуб* — վարդաջուր և այլն):

Քրդական գրական լեզվի հարստացման ու զարգացման գործում զգալի տեղ են գրավում փոխառութիւնները: Այստեղ բնորոշ է նաև այն հանգամանքը, որ փոխառված բառերը, բացի առանձին-առանձին գործածվելուց (ինչպէս՝ совет, трактор, комбайн և այլն), ստանում են քրդերենին հատուկ վերջածանցներ, առաջ բերելով նոր բառ, նոր իմաստ (ինչպէս, *кoлxoз* — կոլտնտեսութիւն, *кoлxoзбан* — կոլտնտեսական, *комбайн* — կոմբայն, *комбайнчи* — կոմբայնավար և այլն):

Թե՛ նոր բառեր ստեղծելու և թե՛ փոխառութիւնների խնդրում որոշակի դեր է խաղում Հայկական ՍՍՌ Գրողների միութեան Քրդական սեկցիան: Նրա մշակներն իրենց ստեղծագործութիւններով հարստացրին օրեստօրե ծաղկող քրդական սովետական գրականութիւնը, մեծ գարկ տալով քրդերեն գրական լեզվի զարգացմանը: Գրողներ Ամին Ավդալի, Արաք Շամիրլի, Զարդոյե Գենջոյի, Վեգիրե Նադիրի, Զասմե Զալիլի, Օթարե Շարույի, Ղաչախե Մուրադի, Ուսրվե Բաքույի, Ահմադե Միրտղիի, Միրայելե Իսաշիդի և մյուսների շափածո և արձակ ստեղծագործութիւնները քրդերեն գրական լեզվի ստեղծման գործում մեծ ավանդ հանդիսացան:

Քրդական գրականութեան զարգացմանը զուգընթաց, մեծ աշխատանք տարվեց և տարվում է թարգմանական գրականութեան ուղղութեամբ: Քրդերեն գրական լեզվի զարգացման մասին գաղափար կազմելու համար կարելի է ասել, որ մեր այժմյան քրդերենով հնարավոր է թարգմանել ինչպէս անցյալ դարերի, նմանապես և մեր դարի գասական գրողների ցանկացած ստեղծագործութիւնը: Դրա երաշխիքն է այն թարգմանական հարուստ գրականութիւնը, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում տվել են քուրդ թարգմանիչները:

Քրդական գրական լեզվի հիմնադրման գործում նշանակալից գործ են կատարում Երևանում հրատարակվող քրդական «Ռյա թագա» թերթը և Հայկական ՍՍՌ Ռադիոկոմիտեի քրդական բաժնի խմբագրութիւնը, որոնց շուրջն են հավաքվել բազմաթիվ թղթակիցներ: Թե՛ թերթը և թե՛ ռադիոհաղորդումները հարստացրին ոչ միայն գեղարվեստական գրականութեան, այլև բաղադրական կյանքի, տեխնիկայի, արդյունաբերութեան բնագավառներին վերաբերող բառապաշարը: Մասնավորապես նոր տերմինների ստեղծման խնդրում շնորհակալ աշխատանք է կատարել Հայկական ՍՍՌ Լուսավորութեան մինիստրութեան քրդական տերմինաբանական հանձնաժողովը, որի ընդունած բառերը գործածվում են առօրյա կյանքում:

Քրդագիտութեան և քրդերեն լեզվի զարգացման ասպարեզում մեծ դեր խաղաց Համամիութենական Քրդագիտական կոնֆերանսը, որը հրավիրվեց 1934 թվականին, Երևան քաղաքում: Կոնֆերանսը, որին մասնակցում էին միութեան տարբեր քաղաքների ու ռեսպուբլիկաների (Ղենիդարազ, Վրաստան, Ադրբեջան, Թուրքմենստան, Հայաստան) քրդագետները, քննարկեց հետևյալ խնդիրները:

1. Քրդերեն միասնական գրական լեզվի մշակման խնդիրը.
2. Քրդերեն լեզվի ուղղագրութեան և այբուբենի հարցը.
3. Քրդերեն լեզվի քերականութեան հարցը.
4. Քրդերեն տերմինաբանութեան և բառակազմութեան հարցը:

Քրդագիտական այդ նշանավոր կոնֆերանսը մի շարք որոշումներ կայացրեց քրդերեն լեզվի զարգացման, քերականութեան հրատարակման, բանահյուսութեան գրառման և տպագրութեան հանձնելու ուղղութեամբ: Քուրդ ժողովրդի կուլտուրայի ասպարեզում պատմական նշանակութիւն ունեցող այդ կոնֆերանսից հետո քրդերեն լեզվի և ընդհանրապես քրդագիտու-

թյան զարգացման խնդրում մեծ աշխատանքներ են տարվել, և այժմ, նոր խնդիրների հասունացման կապակցությամբ, քրդագիտական նոր կոնֆերանսի հրավիրման պահանջն է առաջանում:

Սովետական Հայաստանում շոշափելի գործ է կատարվել քրդական ժողովրդական բանահյուսության զրառման, հրատարակման և հետազոտման ուղղությամբ:

Դեռևս XIX դարի առաջին կեսերին հայ մեծ դեմոկրատ գրող Խ. Աբովյանը, մոտիկից ծանոթանալով բուրգ ժողովրդին ու նրա բանավոր գեղեցիկ խոսքին, այն կարծիքն է հայտնել, որ ամեն մի բուրգ, ամեն մի քրդուհի ի ծնե բանաստեղծ է: Այլ խոսքով, քրդական ժողովրդական բանահյուսության հորինման, ստեղծման գործում ողջ ժողովուրդն է մասնակցել և դարերի ընթացքում ոչ միայն կերտել է վերին աստիճանի հարուստ ֆոլկլոր, այլև սերնդեսերունդ մոնումենտալ ստեղծագործություններ է հասցրել մեզ: Դրանցից են՝ «Մամն ու Ջինն», «Դըմզըմ», «Մամն ու Այշն», «Սիաբանդ ու Խաչն», «Կառ ու Քուրուկ» և այլ հերոսական ու սիրային վիպերգներ:

Միջնադարյան բուրգ գրողների բազմաթիվ ձեռագրեր, ժամանակին չարժանանալով տպագրության, ժողովրդի մեջ տարածվել են բանավոր ձևով, և այժմ երբեմն դժվար է որոշել, թե մեզ հասած ստեղծագործություններից ո՞րն է ժողովրդական և ո՞րը՝ անհատ գրողի: Այդ բախտին են արժանացել՝ Ալի Լարիբի (XI դ.), Ահմադե Ջեղիրի (XII դ.), Ֆախրե Տայրայի (XIV դ.), Ահմադե Խանի (XVII դ.) և մյուս բուրգ մեծ բանաստեղծների թողած գործերը: Մնում է, որ ապագա բանասերը, ձեռքի տակ ունենալով այդ գրողների գրածները և համաձայն ժողովրդական բանավոր նմուշները, որոշի դրանց պատկանելության հարցը:

Քրդական ժողովրդական բանահյուսության հարստացման և հարատևման գործում որոշակի դեր է խաղացել նաև հեթանոսությունը, որը շոշափելի հետքեր է թողել քրդերի թե՛ կենցաղում և թե՛ բանահյուսության մեջ: Ն. Յա. Մառը գրում է. «Որ միջավայրում հեթանոսությունն ավելի համառ է դիմադրում, այնտեղ էլ ավելի բարձր է կանգնած երգը... Քրդերի երգերն իրենց հիմնական նորմաներով և մոտիվներով մի հարստություն են, որ ժառանգվել են հեթանոսությունից, այն հեթանոսական կրոնից, որն իր հետևորդների մեջ մի ժամանակ ներառում էր նաև բազմաթիվ քրդական ցեղեր, որոնք այժմ դավանում են իսլամը»: Քրդական գիցաբանությունը հիմնականում չի հարմարեցվել. «վերամշակվել» որևէ նոր կրոնի և կամ դավանանքի կողմից և հիմբ է հանդիսացել ժողովրդական բանահյուսության համար:

Սակայն քրդական ժողովրդական բանահյուսության հարստության հարցը և նրա հարատևելու հանգամանքը միայն դրանով չի սահմանափակվում: Մեծ նշանակություն ունի և այդ ֆոլկլորի բարձր գեղարվեստականությունը և հարուստ բովանդակությունը, որոնց շնորհիվ նա կարողացել է մուտք գործել ոչ միայն կրոնով տարբեր, այլև կուլտուրապես ավելի բարձր կանգնած հարևան ժողովուրդների բանահյուսությունների ու նույնիսկ գրականության մեջ (փոխանցում, թարգմանություններ, գրական մշակումներ և այլն):

Քրդական ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությանը զուգահեռ, Սովետական Հայաստանում, Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Մ. Աբելյանի անվան Դրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորում, ինչպես և Պատմության, Լեզվագրության ու Արվեստի ինստիտուտներում և Արևելագիտության սեկտորում զգալի աշխատանք է տարվել ու տարվում քրդական ժողովրդական բանահյուսության թե՛ գրառման և թե՛ երգերի ձայնագրման գործում: Այդ շնորհակալ սշխատանքը, որը սկսվել է 1930 թ., մինչև օրս էլ բուռն կերպով շարունակվում է: Նղած հարուստ նյութերի հիման վրա հրատարակվել են ժողովածուներ, ինչպես նաև ձայնագրված երգերի առանձին գրքեր: Դրանց մեջ գտնված են քրդական հռչակավոր վիպերգները, հարյուրավոր սիրային, հերոսական երգեր, բազմաթիվ պարերգեր, հեթանոսական, զրույցներ, առած-ասացվածքներ, շուտասելուկներ, առասպելներ, անեկդոտներ: Դա այնպիսի մի հարստություն է, որը արդեն շատ քրդագետների աշխատություններում երևան է գալիս և հետաքրքիր ու վերին աստիճանի արժեքավոր աղբյուր է քրդագիտության, և ոչ միայն քրդագիտության ասպարեզում: Դա միաժամանակ բուրգ ժողովրդի բանավոր պատմությունն է, որ դեռևս պետք է գրի առնվի և ուսումնասիրվի:

Սովետական Հայաստանում բուրգ ժողովրդի պատմության մասին լուրջ աշխատություններ են լույս ընծայվել: Քրդերի թե՛ նախասովետական և թե՛ սովետական շրջանի պատմության մասին դրվել են առանձին ուսումնասիրություններ: Դրան է նվիրված, օրինակ, Խ. Հ. Ավդալ-

րեգլանի «Քոչվոր քրդերի ծանր վիճակը ցարիզմի օրոք» խորագիրը կրող վերին աստիճանի արժեքավոր աշխատությունը, որն ընդգրկում է 1801—1917 թթ. ժամանակաշրջանը և որպես առանձին գլուխ գետնոված է նույն հեղինակի «Հոգային հարցը Արևելյան Հայաստանում» մենագրության մեջ (Երևան, 1959, էջ 379—440)։ Այս կապակցությամբ հիշատակության արժանի է նաև Ա. Ս. Համբարյանի «Քրդերը Սովետական Հայաստանում» աշխատությունը (Երևան, 1958), ուր խոսվում է այն տնտեսական և կուլտուրական նվաճումների մասին, որ ձեռք են բերել Սովետական Հայաստանի քրդերը շորս տասնամյակների ընթացքում։

Սակայն սրանք, ինչպես և այլ աշխատություններ, չեն տալիս քուրդ ժողովրդի ամբողջական պատմությունը։ Ծիշտ է, նման աշխատանքը իր տեսակի մեջ նորություն չէր լինի. քանի որ քրդերն ունեն այնպիսի նշանավոր պատմահայր, ինչպիսին է Շերեֆ-էդդին Բիթլիսցին (XVI դ.), որի «Շերեֆ-նամեն» («Քրդերի պատմությունը»), գրված պարսկերեն, առաջին անգամ լույս է տեսել Պետերբուրգում, 1860 թ., ինչպես նաև Հուսեյն Հուզնի Մուկիրանին, որի աշխատությունները վերջին տարիներս են լույս տեսել Բաղդադում, քրդերեն լեզվով։ Բայց շնայած իրենց փաստական հարուստ տվյալներին, դրանք չեն կարողացել պատմական որոշ իրադարձությունները ճիշտ գնահատել։ Վերջերս հրատարակվեց Նադո Մախմուդովի «Քուրդ ժողովուրդը» աշխատությունը, որն ընդգրկում է քրդերի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Այդ գիրքը ուշագրավ նրբույթ է մեր ժողովրդի պատմագրության մեջ։ Հեղինակը մի շարք գլուխներ է նվիրել քրդերի էթնիկական ծագմանը, միգրացիայի, միությունների, Քրդստանի աշխարհագրությանը, սոցիալ-տնտեսական կառուցվածքին, լեզվին, կուլտուրային, գրականությանը, դավանանքին, քուրդ ժողովրդի ազատագրական պայքարին, Սովետական Միության քրդերին և այլ կարևոր խնդիրներին։

Ներկայումս մենք ունենք քուրդ պատմաբաններ, որոնք մեծ մասամբ ավարտել են Հայկական ՍՍՌ Պետական համալսարանի, Հայկական ՍՍՌ խ. Արտվանի անվան Մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետները։ Ունենք նաև ասպիրանտներ, որոնք շուտով ավարտելու են ասպիրանտուրան և մասնակցելու են իրենց ժողովրդի պատմության ուսումնասիրության ու լուսաբանման գործին։

Քրդական գրականության զարգացման հետ մեզ մոտ աճել են քուրդ գրականագետներ, որոնք ուսումնասիրելով քրդական հին և նոր գրականությունը, այն կարողանում են գնահատել և արժեքավորել։ Այդ գործում հայտնի են ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի քրդագիտական կաբինետի ավագ դիտական աշխատակից Ղ. Քուրդուեի և բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ռուզենկոյի մի շարք հոդվածները։ Վերջինիս թեկնածուական դիսերտացիան նվիրված էր XVII դարի քուրդ գրող Ահմեդե Նանիի «Մամեն-ու Ջինեն» հուշակավոր պոեմին։ Երևանում, 1955 թվականին, լույս է տեսել առանձին աշխատություն՝ նվիրված քրդական նորագույն գրականությանը, որը կրում է «Սովետական Հայաստանի քրդական գրականություն» խորագիրը։

Այս բոլոր աշխատանքներից բացի շնորհակալ գործ է կատարվել քրդերի ազգագրության, կենցաղի, նիստուկացի ուսումնասիրության բնագավառում։ Այդ ասպարեզում նշանակալից աշխատանք են կատարել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ազգագրության ինստիտուտի ավագ դիտական աշխատակիցներ Ս. Կիլլեսկին և Տ. Արիստովան, իսկ Սովետական Հայաստանում այդ աշխատանքը ծավալել է քուրդ առաջին ազգագրագետ Ամինե Ավդալը, որը աշխատում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորում որպես ավագ գիտական աշխատակից։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ավդալի գրչին են պատկանում մի շարք գիտական աշխատություններ (օրինակ, «Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի», «Արյան վրիժառուությունը քրդերի մեջ և նրա վերապրուկների վերացումը սովետական պայմաններում», «Անդրկովկասյան քրդերի կենցաղը» և ուրիշներ)։ Նրանց մեջ հավաքված հարուստ նյութերի հիման վրա հեղինակը կարողացել է մի շարք ճիշտ եզրակացությունների հանգել, փաստորեն դնելով քրդական ազգագրական աշխատանքների սկիզբը մեզանում։

Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում գործում է քրդագիտական կաբինետ, որի շուրջն են հավաքվել միության մի շարք նշանավոր քրդագետներ, մեծավաստակ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու ղեկավարությամբ։ Այստեղ ուսումնասիրում են քրդերեն լեզուն, քուրդ հին գրողների ձեռագրերը, քուրդ ժողովրդի պատմությունը և ազգագրությունը։ Այստեղ են գործուղվել Սովետական Հայաստանից ուղարկված մի խումբ երիտասարդներ, որոնք որպես ասպիրանտներ խորանում են քրդագիտության տարբեր բնագավառներում։ ՍՍՌՄ Գիտու-

թյունների ակադեմիայի լեզվի և Ազգագրության ինստիտուտներում, ինչպես նաև Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում աշխատում են առանձին քրդագետներ, իսկ Երևանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորում, կազմակերպվել է քրդագիտական խումբ: Այդ խումբը, որի շուրջն են հավաքվել ուսպուրիկայի տարեց և երիտասարդ գիտնականներ, մեծ անելիքներ ունի քրդագիտության հետազոտության համար: Իրա աշխատակիցները (Գ. Ակոպով, Շ. Խուդո, Օ. Ջալիլով և այլն), որոնք հիանալի տիրապետում են հայերենին, հայ հին և նոր գրականության անսպառ շտեմարանից ահագին նյութ կարող են քաղել քուրդ ժողովրդի պատմությունը, կենցաղը, ազգագրությունը հետազոտելու ուղղությամբ: Այստեղ շատ մեծ կլինի Հայկական ՍՍՌ Մատենադարանի դերը, ուր հայերեն, ինչպես նաև պարսկերեն և արևելյան այլ ժողովուրդների լեզուներով բազմաթիվ հազվագյուտ ձեռագրեր կան. որոնց մի մասը վերաբերում է նաև քուրդ ժողովրդի անցյալին և կարող է մանրակրկիտ ուսումնասիրության:

Արևելագիտության սեկտորի քրդագիտական խումբն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդ քրդագետներ, պատրաստելու գործին, բրոնք խորանալով տարբեր մասնագիտությունների մեջ, իրենց նոր աշխատություններով թարմություն կմտցնեն ուշադրության արժանի այս բնագավառում:

КУРДОЛОГИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

АДЖИЕ ДЖИНДИ

(Р е з ю м е)

За истекшие 40 лет курдология в Армении добилась значительных успехов, связанных прежде всего с созданием нового курдского алфавита и изучением курдского языка. После создания алфавита изданы многочисленные труды, посвященные изучению курдского языка, а также ряд словарей (армяно-курдский, русско-курдский, курдско-русский и др.). Для развития курдского языка большую роль сыграло создание оригинальной и переводческой художественной литературы. В этом отношении исключительно велика роль издаваемой в Ереване курдской газеты «Риа таза», а также ежедневных радиовещаний на курдском языке.

Развитию курдологии и курдского языка в значительной мере содействовала Всесоюзная курдологическая конференция, проведенная в Ереване в 1934 г.

В Советской Армении проведена большая работа по сбору, публикации и изучению курдского народного творчества. Начатая еще в 1930 г., эта работа продолжается. Курдский фольклор является ценным источником для развития курдологии и вместе с тем представляет собой устную историю курдского народа.

В Армении по этому разделу курдологии опубликован ряд исследований, в том числе и работы курдских ученых. Успешно развивается также научная работа в области курдской литературы. В этом направлении ценный вклад в науку внесли руководимый академиком И. А. Орбели курдологический кабинет Ленинградского отделения Института востоковедения Академии наук СССР, Институт этнографии АН СССР, курдологическая группа сектора востоковедения АН Армянской ССР.

В настоящее время курдология успешно развивается. В этой молодой отрасли науки, наряду с русскими, армянскими и другими советскими учеными, работают и курдские ученые, выросшие за годы Советской власти.